«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ Ի՞ՆՉ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԱՐՇԱԿՅԱՆ ՆԱԻՐԱ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳԼՈՒԽ1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ: ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ---------- 5

1.1.Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության բնութագրիչները ---------- 5

1.2.Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության ձևավորման խնդիրները ----------11

ԳԼՈՒԽ2. ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ---------17

2.1. Արտադասարանային ընթերցանության աշխատանքի գնահատման չափանիշները, ուսուցման հիմնական փուլերը և դասի կազմակերպումը 1-4-րդ դասարաններում ----------27

Եզրակացություն----------28

Գրականության ցանկ ----------*29*

# Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ընթերցանության հիմնախնդիրը միշտ էլ արդիական է եղել և հուզել ու հուզում է բազմաթիվ մասնագետների:

Մարդկային քաղաքակրթությունը իր զարգացման յուրաքանչյուր փուլում ունի իրեն բնորոշ արժեհամակարգը: Հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններով պայմանավորված են նաև արժեհամակարգի փոփոխությունները: Ներկա ժամանակներում շատացել են տեղեկատվության աղբյուրները, մեր կյանք են ներխուժել և ամեն օր ներխուժում են օտար սովորություններ ու բարքեր: Երեխաներին դուր են գալիս օտարերկրյա ֆիլմերն ու մուլտֆիլմերը, խաղերը: Իհարկե, չանտեսելով բարձրարժեք համաշխարհային ֆիլմերն ու երաժշտությունը, կարևորում ենք այն, որ դպրոցականներին պետք է մշտապես կապված պահել ազգային արժեքների հետ: Նոր տեխնոլոգիական այս աշխարհն աշակերտներին այսօր հեռացրել է գրքից: Շատ կարևոր է աշակերտների մեջ սեր ու հետաքրքրասիրություն առաջացնել դեպի գիրքը:

Անառարկելի է, որ ընթերցանությունը գիտելիքների ձեռքբերման բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրն է: Ընթերցանության միջոցով հարստանում, զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Կարդալն օգնում է մարդուն ուրիշների ծավալած գործունեության ուսումնասիրման ճանապարհով ճանաչել կյանքը, հասկանալ, ընդունել նրա կողմից տրված խորհուրդները, սովորել ուրիշների սխալների վրա:

Այս է պատճառը, որ մեր մանկավարժներն ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողություններ մշակելու համար, իսկ ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել առաջին դասարանից: Կարդալու նախնական կարողությունը ձևավորվում է գրաճանաչության ուսուցման շրջանում: Այս փուլում կարևորվում է թե՛ տառերին ծանոթացնելու, թե՛կարդալու տեխնիկային տիրապետելու գործոնները:[1] Մենք ևս փորձել ենք այս աշխատանքի միջոցով ուսումնասիրել, պարզել, թե որոնք են կրտսեր դպրոցականների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորման հիմնական ուղիները:

[1] Ղարիբյան Ա, Ամիրյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան, 1955թ.:

*Առաջին գլխում* փորձել ենք պարզել,թե ինչպիսի գործընթաց է ընթերցանությունը, որոնք են այդ գործընթացի բաղադրիչները, խնդիրները: Կարևորել ենք նաև այս թեմայի շրջանակներում որոշ մանկավարժների, հոգեբանների ուսումնասիրությունները: Կարևորվել է նաև, թե ինչպիսին է կրտսեր դպրոցականի դերն այս գործընթացում, ինչպիսի խնդիրներ են ծառանում նրա առաջ, որոնք են դրանց հաղթահարման միջոցները: Գործընթացի ճիշտ կազմակերպման համար կարևորվում են կրտսեր դպրոցականի թե՛ տարիքային առանձնահատկությունները,թե՛ ընկալման առանձնահատկությունները: Յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսումնասիրումը հենարան է հանդիսանում ուսուցչի համար ընթերցանության հետաքրքրության զարգացման գործընթացում: Որպեսզի նոր դպրոց հաճախող կրտսեր դպրոցականը սիրի գիրքը և կարդա, պետք է տարրական դասարանի դասվարը կարդալ սովորեցնի, ճիշտ մեթոդների միջոցով հասնի նրան, որ աշակերտի մեջ սեր առաջացնի ընթերցանության հանդեպ, օգնի աշակերտին՝ գրքերի աշխարհում կատարելու առաջին լուրջ քայլերը: *Երկրորդ գլխում* ներկայացրել ենք արտադասարանական ընթերցանության դերն ընթերցողական ճաշակի ձևավորման գործում, քանի որ այն դասարանում կատարված ուսուցողական աշխատանքի օրգանական շարունակությունն ու լրացումն է, և միայն այն է տարբերությունը, որ տնային աշխատանքը ծրագրային նյութերի շուրջ է տարվում՝ որպես դասարանում անցածի ամրապնդում, ապա արտադասարանային աշխատանքը կատարվում է ծրագրային նյութերից դուրս՝ լրացուցիչ տեղեկություններ հաղորդելու համար: Սա է այդ երկու աշխատանքների փոխադարձաբար կապվածության սկզբունքը, որ առանց մեկը մյուսի չի կարելի պատկերացնել, որն էլ իր մեծ նշանակությունն ունի ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործընթացում: Անդրադարձ է կատարվել կրտսեր դպրոցում ինքնուրույն ընթերցանության կազմակերպման հիմնական ձևերին, այդ աշխատանքի գնահատման չափանիշներին:

*Երրորդ գլխի* խնդիրն է պարզել հրաշապատում հեքիաթների դերը ընթերցողական հետաքրքրության ձևավորման գործընթացում: Հետևաբար, ուսումնասիրել ենք բուն հեքիաթի գաղափարը, արժեհամակարգը, դրանց դերն ու կարևորությունը կրտսեր դպրոցականների կյանքում :

***Եզրակացություններում*** ամփոփել ենք մեր կատարած աշխատանքը՝ ներկայացնելով արդյունքներն ու եզրահանգումները:

**Հետազոտության նպատակը**: Ուսումնասիրել կրտսեր դպրոցականների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորման քայլերը, գործընթացի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ մեթոդների ընտրությունը, արտադասարանային աշխատանքների կապը ընթերցողական հետաքրքրությունների հետ և հրաշապատում հեքիաթների դերն այդ գործընթացում:

**Հետազոտության խնդիրները՝**

1. Բացահայտել ընթերցողական հետաքրքությունների ձևավորման կարևորությունը և նշանակությունը կրտսեր դպրոցականի կյանքում:
2. Բացահայտել կրտսեր դպրոցականների ընթերցողական շրջանակները:
3. Հիմնավորել արտադասարանային ընթերցանության հետաքրքրությունների շրջանակը:
4. Բացահայտել հրաշապատում հեքիաթների դերը կրտսեր դպրոցականների հետաքրքրությունների ձևավորման գործընթացում և մշակել դրանց ուսումնասիրման մեթոդական քայլաշարը:

# ԳԼՈՒԽ1. ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ: ԸՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

## 1.1.Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության բնութագրիչները

Ինչպես գիտենք, գիրքը գիտելիքի աղբյուր է,իսկ դպրոցի խնդիրներից մեկը եղել և մնում է սաների մեջ գրքի հանդեպ սեր արթնացնելը, գրքից օգտվելու, այնտեղից գիտելիքներ քաղելու կարողություն ձևավորելն ու զարգացնելը: Դրան կարելի է հասնել աշակերտների մեջ կարդալու կարողություն և ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն մշակելով, քանի որ այն մարդու մտավոր զարգացման, առաջընթացի հիմնական նախապայմանն է:

Լավ կարդալ սովորեցնելը մայրենիի դասընթացի գլխավոր նպատակներից մեկն է: Այն երեխայի առաջ բացում է բոլոր գիտելիքների դռները: Հենց գրաճանաչության ուսուցման ժամանակ ամեն նոր տառի և տառին կից բնագրի ուսուցումը պետք է նպաստի երեխաների մեջ կարդալու կարողության մշակման ու զարգացման միջոց դառնալուն, իսկ տարրական դասընթացի ավարտին վերածվի որոշակի հմտության:

Լավ կարդալը ենթադրում է կարդալ՝ պահպանելով կարդալու որակական բոլոր հատկանիշները, այսինքն՝ ճիշտ հասկանալով, սահուն, արտահայտիչ և այլն: Այն գիտելիքները, որոնք ընթերցանության դասերին ձեռք են բերում երեխաները, թեև տարրական գիտելիքներ են, բայց շատ անհրաժեշտ են նրանց աշխարհընկալման և դաստիարակության ձևավորման համար և հիմք՝ հետագա ուսուցման համար : Ընթերցանության դասի ընթացքում աշակերտը պետք է ձեռք բերի ոչ միայն գիտելիքներ, այլև ինքնուրույն աշխատելու կարողություններ: Դասը պետք է խթանի նրա ինքնուրույն մտավոր գործունեությունը, զարգացնի տրամաբանական մտածողությունը: Ընթերցանության առանձնահատկություններից մեկն էլ մայրենի լեզվի բառապաշարի հարստացումն է, որին նպաստում է ընթեցանությանը զուգահեռ կատարվող բառային աշխատանքը:

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասագրքերում ընթերցանության համար նախատեսված նյութերը դաստիարակչական նշանակություն ունեն: Դրանց միջոցով աշակերտների մեջ սերմանվում է նվիրվածության ջերմ զգացում հայրենիքի և հիացմունք՝ նշանավոր մարդկանց նկատմամբ: Ընթեցանության միջոցով երեխաների մեջ դաստիարակվում են վարքի այնպիսի հատկանիշներ, ինչպիսք են՝ կարգապահությունն ու ճշմարտախոսությունը, կամքի ուժը, ձգտումը դեպի լավն ու բարին, դրականն ու հերոսականը, սերը դեպի գեղեցիկը և այլն: Գեղարվեստական կերպարը հաճախ ազդում է երեխայի մտածողության վրա: Մռայլ գույներով բացասական կերպարը կարող է երեխայի մեջ նրանից խորշելու, չնմանվելու զգացողություն առաջացնել: Ընթերցանության նյութերի միջոցով երեխաների մեջ մշակվում է լեզվական կուլտուրա, որով նրանք արտահայտում են իրենց տեսածն ու լսածը, մտքերը, ապրումները՝ պարզ ու հստակ, մաքուր ու գեղեցիկ հայերենով:

Կարևոր է նշել նաև բացատրական ընթերցանության դերը , որն ուղեկցվում է ընթերցածի շուրջ անցկացվող զրույցներով, անհրաժեշտ բացատրություններով ու մեկնաբանություններով: Այն նպաստում է ընթերցած նյութի ճիշտ ընկալմանը և բովանդակության պարզ, հասկանալի վերարտադրմանը: Ընթերցանության այս մեթոդի նպատակը աշակերտների կարդալու տեխնիկայի զարգացումն է, գիտելիքների ու ճանաչողության շրջանակի ընդլայնումը և բարոյական կերպարի ձևավորումը: Ընթերցանության նման եղանակով երեխաներին հնարավորություն է տրվում հասկանալ կարդացած յուրաքանչյուր բառի իմաստը, դրանց միջև եղած տրամաբանական կապերը և բնագրի բովանդակությունն ամբողջությամբ:

Հայ մեծանուն մանկավարժ Խաչատուր Աբովյանը ուսուցման ժամանակ կարևորել է կարդացվող բնագիրը և ուսուցման գործընթացի նկատմամբ աշակերտի մեջ գիտակցական վերաբերմունք ձևավորելը ,իսկ դրա համար աշակերտի մեջ ոչ մի անհասկանալի բան չպետք է թողնել, ամեն ինչ պետք է մատչելի ու հետաքրքիր մատուցել: Նա անհրաժեշտ է համարել ընթերցանության ժամանակ բացատրություններ տալը, որը կարդացածը ճիշտ ընկալելու միջոց է:

Խ.Աբովյանը ընթերցանության մեջ կարևորել է զրույցը, բարդ ու անծանոթ բառերի բացատրությունը, նյութի առանձին մասերի մեկնաբանությունը՝ որպես երեխաների խոսքի զարգացման, գիտելիքների ձեռքբերման միջոց:

Մայրենի լեզվի դասերի միջոցով երեխաներին աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդումը Խ.Աբովյանը կապում է երեխաների տեսածի, լսածի և

զգացածի մասին պատմելու աշխատանքի հետ, որը կարևոր նշանակություն ունի նաև երեխաների բանավոր խոսքի զարգացման համար:[2]

Կարդալու նկատմամբ հետաքրքրության ձևավորման գործընթացում չափազանց կարևոր է ընթերցվող նյութի, գրականության նկատմամբ հետաքրքրության առաջացումը: Վարդգես Պետրոսյանն այս կապակցությամբ նշում է. <<Գրականությունը, այո, հրեղեն խոսք է, իսկ մենք ինչ ենք հասցնում երեխաներին այդ հրեղեն խոսքից՝ մի սիգարետի ծուխ, մի լուցկու կրակ…այսինչ վեպի գաղափարական բովանդակությունը, այնինչ պոեմի պատկերները, այսինչ պիեսի դրական և բացասական կերպարները: Հրեղեն խոսքը մասնատում, կտոր-կտոր ենք անում, որ հեշտ լինի վերլուծելը: Գրականության անհայտ, կախարդական աշխարհը դառնում է թվանշան ստանալու համար տրված տնային հանձնարարություն>>:[3] Այս երևույթի դեմ պայքարելու համար ճիշտ կազմված հարցերի միջոցով պիտի ակտիվացնել աշակերտների միտքը, բացել կարդացած ստեղծագործության բարոյահոգեբանական ամբողջ իմաստը: Աշակերտներին բերել այն համոզման, թե որքան ուշագրավ և հետաքրքիր է այն կյանքը, որը նկարագրվում է ստեղծագործության մեջ: Որպեսզի ընթերցած ստեղծագործության շուրջ կազմված հարցերը ծառայեն նպատակին, պետք է ճշտել, թե տվյալ հարցն ի՞նչ նպատակ է հետապնդում, ո՞ւր են տանում տրամաբանորեն իրար հետ կապված հարցերը, ի՞նչ է պահանջվում հարցաշարով աշխատելու վերջին քայլում, այսինքն՝ աշակերտները պետք է դառնան փոքրիկ հետազոտողներ և լուծեն կարդացած ստեղծագործության հիմնախնդիրները:

Ընթեցանության նկատմամբ աշակերտների մեջ հետաքրքրության առաջացման համար կարևոր է.

1. որևէ նյութ ընթերցելուց հետո քննարկել նրանում եղած բարոյական,հոգեբանական արժեքները և դրա շուրջ կատարել վերլուծություն,
2. որոշել հատվածները, գործող անձանց մենախոսությունները, մտքերը, որոնց շուրջ պիտի վերլուծություն կատարել,
3. այլ օրինակների միջոցով աշակերտներին ընտրության հնարավորություն տալ,
4. որոշել, թե նյութը ուսումնասիրվելու է մե՞կ, թե՞ երկու դասաժամերին, որպեսզի քննարկվող հարցերը ճիշտ բաշխվեն դասաժամերի միջև,

[2] Տեր-Գրիգորյան Ա.,Ընթեցանության մեթոդիկա, էջ 18-42:
[3] Նույն տեղում:

5. հարցերը և բացատրությունները պետք է ձևակերպել գիտական հիմունքներով՝ պարզ, հստակ, բայց ոչ պարզունակ,
6. պատրաստի, ուղղորդող կարծիքներ չներկայացնել, պետք է լսել աշակերտների կարծիքները, տարբերակները,ապա ներկայացնել, քննարկել կամ ուղղել դրանք:

Նման աշխատանքը հետաքրքրություն է առաջացնում կարդալու նկատմամբ, օգնում երեխաներին հերոսների վարքի վերլուծության միջոցով ճանաչել կյանքը, դասեր քաղել ոչ միայն սեփական, այլև ուրիշների սխալներից, ընդօրինակել ճիշտը, արդարացին: Աշակերտը, այսպիսով, որևէ ստեղծագործություն ընթերցելիս՝ կհասկանա, կգիտակցի, որ կարդալիս պետք է կարևորի մտքերը, գաղափարները, կարողանա դրանք տեղափոխել իր կյանք և օգտվել դրանցից: Այդպես նա կսիրի գիրքը, կդառնա հասկացող ընթերցող:[4]

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն կարող են առաջացնել թատրոնը, կինոն: Ընթերցած գրքի , դիտած ֆիլմի, ներկայացման, հաղորդումների քննարկումները երեխային դրդում են խորությամբ թափանցել ստեղծագործության բովանդակության մեջ, ճիշտ գնահատել հեղինակի արվեստի ուժն ու գեղեցկությունը:

Ընթերցանության ճիշտ կազմակերպումը ենթադրում է նաև հիգիենայի կանոնների կիրառում և պահպանում, որը պետք է զուգակցել երեխայի գործունեության մյուս տեսակների՝ ուսման, խաղի և տնային հանձնարարությունների կատարման հետ: Պառկած վիճակում, թույլ լուսավորվածության տակ կարդալը ազդում է տեսողության վրա և արագ հոգնեցնում : Չպետք է մոռանալ, որ մանուկներին գրքին մոտեցնելն ավելի դյուրին է, քան երիտասարդներին: Վերջիններս, որպես անհատներ, ձևավորված են և ունեն իրենց նախասիրությունները:Այդ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ գրաճանաչության ընթացքում պետք է փոքրիկների համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և նրանց էլ դրդել դրանք կարդալ: Պետք է հավասարաչափ հոգ տանել թե՛ տառերին ծանոթանալու, թե՛ կարդալու տեխնիկային: Պետք է առաջարկել աշակերտներին կարդալ անծանոթ տեքստեր, մանկական ամսագրեր և այլն: Աշակերտն առաջին հերթին պետք է հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ նյութը ինքը՝ հեշտ թե դժվար, կարող է կարդալ; Ըստ Ջ.Գյուլամիրյանի՝ աշակերտը կարդալ է սովորում ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով,այլ անծանոթ նյութերի անընդհատ ընթերցմամբ: Հիշենք նաև

[4] Գյուլամիրյան Ջ.,Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, էջ 132-132:

Սոխումլինսկու խոսքերն այն մասին, որ կարելի է ապրել և լինել երջանիկ մաթեմատիկա չիմանալով, սակայն չի կարելի լինել երջանիկ՝ չսիրելով: Ում հասանելի չէ ընթերցանության արվեստը, նա անդաստիարակ է, բարոյապես՝ տգետ: Կրտսեր դպրոցականները հիմնականում կարող են սահուն , անսխալ, հասկանալով կարդալ, բացատրել կարդացածի իմաստը: Չպիտի բավարարվել դրանով, անհրաժեշտ է ձգտել, որ գիրքը նրանց համար դառնա դեպի մտավոր, բարոյական ու գեղագիտական զարգացման բարձունքները տանող ուղի, որ զգան բառի գեղեցկությունը, նրա ամենանուրբ երանգները, նրանց մեջ ձևավորվի կարդալով ինքնաճանաչման կամ աշխարհաճանաչման հասնելու պահանջը:

Մայրենիի դասագրքերը յուրօրինակ զրուցակիցներ են աշակերտների համար: Կարծես հեղինակը խոսում է երեխայի հետ, սովորեցնում աշխատել գրքով, խորհուրդներ տալիս, բացատրում անհասկանալի բառերը, տեղափոխում բառերի խորհրդավոր աշխարհը, ամեն մի բնագրի մեջ ուշադրություն հրավիրում կարևորի, ցայտունի վրա: Նա երեխային մեկ պատմում է հետաքրքիր հեքիաթներ, պատմություններ, մեկ առաջարկում հանելուկներ, շուտասելուկներ, առած-ասացվածքներ, օգնում երեխային անցնել մարդ, քաղաքացի, հայրենիքի նվիրյալ դառնալու դժվարին ուղին՝ միշտ մնալով նրա հետ, կապելով երեխային իր ընտանիքին, ընկերներին, բնօրրանին, հայրենիքին: Այդ ամենին պետք է հասնել՝ լավ կարդալ իմանալով: Կարդալու միջոցով երեխաները ոչ միայն ճանաչողական գիտելիներ են ստանում,այլև զգում են մայրենի լեզվի գեղեցկությունը, ընկալում բառը, խոսքը: Որպեսզի վերընթերցումը ձանձրալի չլինի ՝ ուսուցիչը պետք է գտնի, բացահայտի մի նոր բան՝ այնպիսի մանրամասներ, որ առաջին, երկրորդ ընթերցումների ժամանակ չեն նկատել երեխաները Նրանց ուշադրությունը պետք է հրավիրի գեղարվեստական կերպարների, բնութագրումների, գործող անձերի, լեզվի ոճի և այլ հարցերի վրա: Ներթափանցելով ընթերցած նյութի բովանդակության տարբեր շերտերի մեջ՝ աշակերտները պատմում, վերլուծում, ստեղծում են պատճառահետևանքային կապեր[5]:

[5] Ղարիբյան Ա., Ամիրյան Ա.և ուրիշներ,հայոց լեզվի մեթոդիկա,Երևան,1955թ:
Գյուլամիրյան Ջ.,Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա,Երևան, <<Զանգակ-97>>,2009,էջ128:

## 1.2.Կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության ձևավորման խնդիրները

Դիտարկելով ընթերցանության հետաքրքրությունը՝ մենք համեմատում ենք այն կարդալու բնույթի հետ: Ընթերցման հիմնական բաղադրիչներից մեկը, ուղղակիորեն ներառելով ընթերցողի հետաքրքրությունը, մոտիվացիան է՝ որպես շատ տարբեր շարժիչների (կարիքներ, մտադրություններ, զգացմունքներ, ցանկություններ, հետաքրքրություն, կանոններ և այլն) հավաքածու: Ընթերցման դրդապատճառներից է ընթերցողի մեջ ներքին մոտիվացիան , որը հիմնվում է այն փաստի վրա, թե որքանով է ընթերցվող գիրքը համապատասխանում ընթերցողի պահանջներին: Ընթերցանության գիտակցված պահանջը խրախուսում է ընթերցողին լինել ակտիվ , ստիպում է ջանքեր գործադրել և լրացնել անհրաժեշտ տեղեկության պակասը:

Ընթերցելու անհրաժեշտությունը օբյեկտիվ պահանջի և սուբյեկտիվ մոտիվացիայի միասնություն է: <<Ընթերցողների հետաքրքրությունն անձի (կամ խմբերի) ընտրողական դրական վերաբերմունքն է այն տպագրված նյութերին, որոնց նշանակությունը որոշվում է նրանց ընթերցանության կարիքներին համապատասխան>>:[6]

Անհրաժեշտությունը որևէ կարևոր մասի բացակայությունն է, որը պարտադիր է անձի նյութական և հոգևոր կյանքի պահպանման և զարգացման համար, այսինքն՝ այն, առանց ինչի գոյությունը դժվար է կամ անհնար է պատկերացնել: Հետաքրքրությունը այն մոտեցումն է, որը զարգանում է անհատի կողմնորոշման մեջ իրականության նկատմամբ և հանգեցնում առարկայի ճանաչմանը: Ճանաչողական գործունեությունը բխում է կարիքից և, շեղվելով անհրաժեշտությունից, դառնում է ճանաչողական հետաքրքրություն: Հաճախ գիտակցական անհրաժեշտության հիման վրա հետաքրքրությունը առաջանում և զարգանում է որպես հուզական-ճանաչողական վերաբերմունք առարկայի և գործունեության նկատմամբ: Այս պարագայում գիտելիքներին և հմտություններին տիրապետելու անհրաժեշտությունը նախորդում է հետաքրքրությանը:

Հետևաբար, զարգացման որոշակի փուլում պահանջը դառնում է հետաքրքրություն, իսկ հետաքրքրությունը վերածվում է երկրորդ տեսակի կարիքի: Այսպիսին է պահանջի և հետաքրքրության միջև եղած կայուն հարաբերությունը:

[6] Проблема формирования читательских интересов у младших школьников.

Ընթերցանությունը դիտարկվում է երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով երեխաների, դեռահասների կողմից գեղարվեստական ստեղծագործությունների, գիտական որոշ նյութերի, լրագրերի ընթերցումն է,իսկ նեղ իմաստով՝ ուսումնական գործընթացում երեխաներին ուսումնական գրականությանը ծանոթացնելը, որի նպատակն է սովորեցնել սիրել գիրքը, ճիշտ հասկանալ, յուրացնել այն, ինչ կարդացել է:

Մեծ գրողներ, մանկավարժության և հոգեբանության գործիչներ՝ Լ.Ն. Տոլստոյը, Մ. Գորկին, Դ. Բ. Էլկոնինը և մյուսները, իրենց աշխատություններում անդրադարձել են այնպիսի կարևոր խնդիրների , ինչպիսիք են կարդալու նպատակը, երիտասարդ սերնդի դաստիարակության համար անհրաժեշտ գրականությունը, ընթերցողին կրթելու ուղիները և այլն: Այս խնդիրների ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու խնդիրը մնում է լիովին չլուծված: <<Հանրային կրթության մասին>> (1874թ.) աշխատանքում Լ. Տոլստոյը ցավով գրում է դպրոցական կրթության տխուր արդյունքների մասին, որը սպանում է յուրաքանչյուր կենդանի մտածելակերպ, երեխայի երևակայությունը և ստեղծագործական միտքը, ամենակարևոր գործընթացները, առանց որոնց անհնար է խորը հետաքրքրության ձևավորումը. <<Այն միտքը , որ հաջողված է ուսման համար, հարկավոր է ոչ թե պարտադրել, այլ առաջացնել հետաքրքրություն, այդ մտքի հանդեպ բոլոր ուսուցիչները համաձայն են >>:[7] Տոլստոյի հետաքրքրությունների տեսությունը մանկավարժական և մեթոդաբանական առումով գնահատելու համար հարկ է հիշել, որ իր մանկավարժական փորձի հիմնական նպատակն էր ցույց տալ, թե ինչ պայմաններում և կրթական համակարգում, ինչպիսի ազդեցության ներքո կարող է սովորական գյուղական դպրոցում աշակերտը ստանալ ոչ միայն խորը ուսուցում, այլև իր ճանաչողական ու բարոյական հետաքրքրությունների լիարժեք զարգացումը՝ երեխայի անհատականության բոլոր ստեղծագործական հնարավորությունների դրսևորմամբ:

Տարրական դասարանների հիմնական խնդիրն է զարգացնել սահուն, գիտակցված, ճշգրիտ և արտահայտիչ ընթերցման հստակ հմտություն: Դասընթացի սկզբնական փուլում ընթերցանության հմտությունների ձևավորումը պետք է հիմնված լինի ընթերցանության հետաքրքրության առաջացման և զարգացման վրա: Կարդալու ընթացքում անհրաժեշտ է միավորել ընթերցանության

[7] Курочкина М. Методы развития творческих способностей младших щкольников// Воспитание школьников – 2009 –N 4-С.48-51.

հմտությունների ձևավորման,երեխայի ընդհանուր զարգացման և ընթերցանության մեջ հետաքրքրություն առաջացնելու գործընթացները: Ընթերցանության սկզբից հետաքրքրությունը պետք է օգտագործվի որպես ճանաչողական խնդիրների լուծման միջոց, սակայն հետաքրքրության առաջացումը անհնար է առանց վարժ կարդալու հմտության: Իր հերթին, կարդալու հմտությունը չի ստեղծվի առանց ճանաչողական հետաքրքրության հմտությունը զարգացնելու ցանկության: Այս երկու երևույթները այնքան խորը փոխկապակցված են, որ դժվար է տարբերակել: Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երևույթները փոխկապակցված միասնության մեջ և ստեղծել մի ուսումնական համակարգ, որը կապահովի ընթերցանության հմտությունների զարգացման գործընթացում ընթերցանության հետաքրքրության առաջացումը և զարգացումը: Գրականության մեջ «ընթերցման գործընթաց» տերմինը ստանում է տարատեսակ մեկնաբանություններ, սակայն Մ.Ն. Բորիսովան, Դ.Բ. Էլկոնինը, Վ.Գ. Գորեթսկին, Մ.Մ. Ռուբինշտեյնը և մյուսները միակարծիք են, որ կարդալը նյութի բովանդակությունը հասկանալն է:

Պետք է նշել, որ որոշ հետազոտողներ փորձում են ընթերցման գործընթացը սահմանել ավելի խորը և մանրամասնորեն: Նրանք ընդունում են իմաստալից ընթերցման առաջատար արժեքը, որի մեջ բառերն ու արտահայտությունները դառնում են բովանդակության խոսնակներ և ստանում գաղափարների, պատկերների, մտքերի, զգացմունքների, ձգտումների հուզական ունակություն: Որքան լավ է մարդը կարդում, այնքան քիչ է ուշադրություն դարձնում տեքստի տեխնիկական ընթերցմանը:

Ընթերցանությունը բավականին բարդ անհատական գործընթաց է: Դրա անհատականությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ընթերցող անհատական աշխատանք է կատարում տեքստի հետ: Ընթերցողը հայտնվում է տարբեր սոցիալական պայմաններում, տարբեր դարաշրջաններում, տարբեր միջավայրերում, և այն, ինչ հետաքրքրում է որևէ դարում, կարող է չհետաքրքրել այլ սոցիալական և պատմական պայմաններում: Պետք է հաշվի առնել այն փաստը, որ յուրաքանչյուր ընթերցող արձագանքում է գրքին իր մտածելակերպի որոշակի կողմից: «Մեկի մոտ իր անհատականության և կյանքի փորձի համաձայն տվյալ աշխատանքը կարդալիս հիմնականում բորբոքվում են զքացմունքները, որոնք երբեմն իրենց են ենթարկում նույնիսկ միտքը: Սակայն երբեմն միտքն է ճնշում անձի զգացմունքայնությունը»:

Ընթերցողի հետաքրքրության ձևավորումը կարևոր գիտական և մանկավարժական խնդիր է: Դրա ակտուալությունը պայմանավորված է մարդու կյանքում բացառիկ դեր ունեցող՝ անընդհատ աճող խոսքով, որը ծառայում է որպես հաղորդակցման ունիվերսալ միջոց, անձի ինտելեկտուալ և հոգևոր զարգացման, յուրաքանչյուր մարդու սոցիալական գործունեության համար անհրաժեշտ պայման:

Մեծ նշանակություն է տրվում երեխաների անհատականության ուսումնասիրմանը: Դ.Ն. Ուզնաձեի կարծիքով, ընթերցանության հմտություն տիրապետելու առաջին փուլում առաջանում է հետաքրքրություն, որը հաճույք է պատճառում ոչ միայն որպես հետաքրքիր բովանդակության ծանոթանալու միջոց, այլև՝ որպես գործընթաց: Ըստ նրա՝ գործողության միտումը և ընթերցման մեխանիզմի բարելավումը ենթադրում է, որ երեխան սկսում է գրքեր կարդալ հետաքրքրության, հաճույքների և զվարճանքի նպատակով:Այս իրավիճակը ներկայումս ակտուալ է, բայց ժամանակի ընթացքում երեխայի դրական վերաբերմունքը գրքերի ընթերցման հանդեպ և հետաքրքրությունը անհետանում են [1, 101][8]:

Տարրական դասարանների աշակերտների համար գոյություն ունեցող գրական ընթերցանության ծրագրերի վերլուծությունները պետք է ապահովեն հուզական և գեղագիտական բարձր մակարդակ: Ընթերցման ժամանակ առաջին հերթին երեխան ցուցաբերում է զգացմունքային մոտեցում: Եվ, չնայած նրան, որ ժամանակակից դպրոցներն առաջ են բերում երեխաների հուզական զարգացման խնդիրը, այդ խնդրի լուծումը այդքան էլ հեշտ չէ: Ի վերջո, այս խնդիրը պահանջում է որոշակի մեթոդաբանական հմտություններ, երեխաների ընթերցանության զարգացման գնահատման կոնկրետ չափանիշներ ուսումնասիրության ընթացքում:

Մեկ այլ առանձնահատկություն է հանդիսանում դպրոցական տարիքի ընթերցողների գեղարվեստական և իրական աշխարհի նույնականացումը: Պատահական չէ, որ ընթերցողի զարգացման այս շրջանը կոչվում է «միամիտ ռեալիզմի» տարիք: Սա արտահայտվում է կերպարի հանդեպ վերաբերմունքով, այսինքն՝ երեխան նրան համարում է իրական:

Երրորդ՝ երեխաներն ունեն, այսպես կոչված, ներկայության ազդեցություն, ինչը նշանակում է, որ երեխան կարող է ապրել տվյալ կերպարի հետ միասին:

[8]Курочкина М. Методы развития творческих способностей младших школьников // Воспитание школьников. - 2009. - № 4. - С. 48-51.

Չորրորդ՝ երեխաների վերջին առանձնահատկությունը գեղարվեստական ձևի արձագանքի բացակայությունն է:

Ընթերցանության ընթացքում երեխաներն առաջին հերթին տեսնում են հերոսներ, սյուժե, առանձին իրադարձություններ, բայց ոչ՝ էպիտետներ, կետադրական նշաններ, պարբերությունների բաժանում:

Այսպիսով, աշակերտների ընկալման առանձնահատկությունները ուսուցչի համար հենարան են ընթերցման հետաքրքրության զարգացման գործընթացում: Դասի ընթացքում ուսուցիչը ցույց է տալիս երեխաներին, որ ընթերցանությունը հաղորդակցության միջոց է, ընթերցողի և հեղինակի երկխոսություն,սակայն այդ հաղորդակցությունը ոչ թե ուղիղ է, այլ իրականացվում է հեղինակի ստեղծած տեքստի միջոցով: Գիրքը ազդում է ընթերցող երեխայի վրա: Եվ երբեմն շատ դժվար է առանձնացնել դասի հիմնական արդյունքը. ի՞նչն է ավելի կարևոր՝ հեղինակի դիրքորոշման ընկալո՞ւմը, թե՞ երեխայի տպավորությունը ընթերցումից:

Աշակերտի հետաքրքրության զարգացումը կարելի է դիտարկել հետևյալ փուլերում՝նախապատրաստական, կարդալու կարողության ձևավորման, ընթերցման գործընթացի մոտիվացիայի , գիտակցված մոտեցման պատրաստման փուլ և ամփոփման փուլ: Այս փուլերի տևողությունը փոփոխական է, քանի որ հետաքրքրասիրության և ընդհանուր զարգացման մակարդակը երեխաների մեջ տարբեր է՝ պայմանավորված գենետիկ կապով և անհատական առանձնահատկություններով:

# ԳԼՈՒԽ2. ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

## 2.1. Արտադասարանային ընթերցանության աշխատանքի գնահատման չափանիշները, ուսուցման հիմնական փուլերը և դասի կազմակերպումը 1-4-րդ դասարաններում

Այս ոլորտում աշակերտների կատարած աշխատանքը նույնպես գնահատվում է տասը միավորանոց համակարգով: Գնահատականը նշանակվում է մատյանում՝ մայրենի լեզվի էջում: 9-10 միավոր է գնահատվում այն աշխատանքը, որը բավարարում է ծրագրային պահանջները: Իր ընտրած գրքերի ընթերցումն իրականացվում է ըստ բոլոր մակարդակների՝ հասկանում է կարդացածը, պատմում է գրագետ, կապակցված խոսքով: 7-8 միավոր ստանում է այն աշակերտը, որը ճիշտ է ակտիվ է, բայց գրքի վերաբերմամբ ինքնուրույն կողմնորոշվելիս թույլ է տալիս սխալներ: 5-6 միավոր է գնահատվում այն երեխան, ով աշխատանքը կատարելիս չի տեղավորվում ոչ մի ժամկետի մեջ: ՈՒսուցիչը կատարել է արտադասարանային ընթերցանության ծրագիր և անբավարար գնահատականի մասին խոսք չի կարող լինել; Տարեվերջյան կտրվածքով գնահատականները կցվում են մայրենի լեզվի գնահատականներին:

Գնահատելիս հաշվի են առնվում՝ ա.գրքերում երեխայի ճիշտ կողմնորոշումը և նրա շարժառիթային, ընթերցողական շրջանակները, բ.կարդացածի շրջանակները, ճշտությունը, եզրակացությունները և դատողությունները, գ. աշակերտների, որպես ընթերցողների բերած հասարակական օգուտը, մասնակցությունը ցուցահանդեսներին, քարտարանների ստեղծման աշխատանքներին, ընթերցանության դասերին նախապատրաստվելիս ընկերներին օգնելիս և այլն[9]:

Առաջին դասարանի երկրորդ կիսամյակից, քանի որ նոր են սկսում ընթերցել երեխաները, ընթերցելու համար ընտրվում են փոքրածավալ նյութեր:

Երկրորդ դասարանցու համար ընդունված է ընթերցել մեկ շաբաթում 45-60էջ, թույլ ունակություններ ունեցողների համար երկու-երեք էջանոց, երրորդ դասարանցու համար ՝ 60-70 էջ ընթերցելու համար:

[9] Սիմոնյան Ա, Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 11. 2011,էջ 18-24:

Այս տեսակի դասերը առաջին դասարանում պլանավորվում են միանգամից և հաշվի են առնվում և՛ դասարանային, և՛ արտադասարանային աշխատանքի բոլոր անհրաժեշտ ձևերը: Պլանավորելիս պետք է նկատի ունենալ ՝ ա. Աշակերտների պատրաստվածության մակարդակը, բ.տեղանքի առանձնահատկությունները, գ.երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Այս ամեն հաշվի առնելով գիրք կամ ընթերցելու նյութ ընտրելիս պետք է նաև հաշվի առնել հետևյալ պայմանները՝

1. ընտրվում են գեղարվեստական այնպիսի ստեղծագործություններ, որոնք բազմակողմանի կնպաստեն երեխաների մտքի զարգացմանը,
2. բնագիրը, որն ընտրվել է ընթերցվելու համար,պետք է ծավալով փոքր լինի, մատչելի լինի, թեման հոգեհարազատ պիտի լինի, հասկանալի, նախաբանը՝ հետաքրքրաշարժ,
3. ընտրվող ստեղծագործությունները ընթերցանության համար պետք է լինեն այնպիսիք, որ առաջին դասարանցիները,հենց առաջին կիսամյակից կարողանան ծանոթանալ դրանց կառուցվածքին, դիտեն նկարազարդումները, հրճվեն հերոսների նկարներով, իսկ երկրորդ կիսամյակում կողմնորոշվեն գրքի ընթերցման ընթացքով:

Դասի ընթացքը պլանավորելով պետք է պահպանել մշտականությունը, հաջորդականությունը, համակարգայնությունը: Առաջին դասարանի առաջին կիսամյակում արտադասարանային ընթերցանության դասն ունի այսպիսի բաղադրիչներ՝

1. հակիրճ ներածական մաս,
2. ուսուցչի կողմից նյութի արտահայտիչ ընթերցում(3-7րոպե),
3. ունկնդրածի խմբակային քննարկում(4-6րոպե),
4. ընթերցած գրքի դիտարկում(3-4րոպե),
5. գրադարանից օգտվելու մասին խորհուրդներ:

Տարրական փուլում այս տեսակի ընթերցանությանը տրվում է 20-25րոպե, իսկ երկրորդ կիսամյակում պարապմունքները տևում ն 45 րոպե, կարող են աշխատանք տարվել անգամ երկու գրքի շուրջ: Ընտրելով ընթերցվող գիրքը՝ նախ կարդում է ուսուցիչը բարձրաձայն, ապա քննարկում երեխաների հետ, իսկ մյուսը հանձնարարում երեխաներին:

Երկրորդ դասարանում արտադասարանային ընթերցանության դասերը կազմակերպվում են շաբաթը մեկ անգամ: Նախքան ընթերցանության դասի կազմակերպումը՝ մեկ շաբաթ առաջ հաղորդվում են թեման և խնդիրները: Օրինակ՝

եթե գալիք դասի ժամանակ պլանավորվում է կարդալ աշնան գույները նախաբանով, բացատրում է ուսուցիչը, որ կարելի է կարդալ բանաստեղծություններ,պատմվածքներ, նյութեր կարող են հավաքել մանկական ամսագրերից, թերթերից, գրքերից, իսկ գեղեցիկ աշնանային լուսանկարներով փորձեն կազմակերպել ցուցահանդես: Նախապես կազմակերպել էքսկուրսիա, դիտել աշնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Երեխաները դասարան են բերում կարդացած, հավաքած նյութերը, նկարները և այլն: Դրանք ցուցադրվում, քննարկվում, վերլուծվում են աշակերտների կողմից:Երբ երեխաներն արտահայտում են իրենց մտքերը, զրույցի մեջ է մտնում ուսուցիչը և ի մի է բերում իր ասելիքը, ամփոփում, ընդհանրացնում է քննարկվող թեման: Երրորդ դասարանում կան որոշ դժվարություններ, դա այն է, որ դասապրոցեսից դուրս է մնում ամբողջ երկուշաբաթյա ժամանակահատված:Այդ խնդրի լուծման համար պետք է կազմակերպել արտադասարանային ընթերցանություն, որպեսզի դասից դուրս երեխաները զբաղվեն գրքով: Երկրորդ,երրորդ դասարաններում արտադասարանային ընթերցանության դասն ունի հետևյալ հիմնական փուլերը.

1. աշակերտների կողմից դասարան բերված գրքերի դիտում, հատկապես այն գրքերը, որոնք հետաքրքիր են ամբողջ դասարանի համար,
2. հետաքրքիր գրքերի ընթերցում, վերլուծում,
3. ծանոթացնել նոր ստեղծագործություններին:

Այս տիպի ընթերցանության դասերի ժամանակ նպատակն է պահպանել հետևյալ մեթոդական պահանջները.

1. զրույցը, որը կազմակերպվում է գիրքը ընթերցելուց հետո,դրան պիտի մասնակցեն հնարավորինս շատ երեխաներ,
2. տանն ընթերցանությունը պետք է զուգակցել այնպայման կարդալու ճիշտ կանոնների յուրացման հետ,
3. որպես կարևոր հնար են բարձրաձայն, արտահայտիչ ընթերցանությունն ու բնագրին հարազատ պատմումը:[10]

---

[10] Նախաշավիղ,8.11.2011,էջ 18-24:
Տեր-Գրիգորյան Ա., Արտադասարանային ընթերցանության կազմակերպում ընտանիքում, (Հայաստանի աշխատավորուհի),1968թ.N6:
Տեր-Գրիգորյան Ա.,<<Ընթերցանության մեթոդիկա>>տարրական դասարաններ: Նախաշավիղ,2017,էջ 53-56:

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Այսպիսով, մեր կողմից իրականացված հետազոտության շրջանակներում փորձեցինք պարզել կրտսեր դպրոցականների ընթերցողական հետաքրքրության ձևավորումը

**Հարցաթերթիկ**

Սիրելի՛ դպրոցական, մենք ուզում ենք պարզել քո ընթերցողական հետաքրքրությունների շրջանակը:

Խնդրում ենք պատասխանել նշված հարցերին:

Շնորհակալությո՛ւն աջակցության համար:




Տրամագիր 1

Հարցաթերթիկի առաջի կետի վերլուծությունը ցույց տվեց, որ հեքիաթը եղել և այսօր էլ մնում է մանկան ամենասիրելի ստեղծագործությունը, որը բացահայտում է երեխաների ներքին հնարավորությունները, զարգացնում նրանց ստեղծագործական կարողությունները և, միաժամանակ, դաստիարակչական շատ խնդիրներ լուծում՝ ձևավորում կրտսեր դպրոցականի արժեհամակարգը:

Երկրորդ հարցի նպատակն էր պարզել, թե ինչպես են ընտրում այն գրքերը կամ ստեղծագործությունները, որոնք պիտի ընթերցեն:

| Ծնողի օգնությամբ | Գրադարանավարուհու օգնությամբ | Ուսուցչի օգնությամբ | Ինքնուրույն |
|---|---|---|---|
| 19% | 22% | 41% | 16% |




Տրամագիր 2

Դեռ վաղ տարիքից պետք է երեխայի մեջ սեր արթնացնել դեպի գիրքը: Սկզբում, նախքան դպրոց հաճախելը, նրանց համար գրքեր են կարդում ծնողները՝ հիմնականում հեքաթներ: Իմ փորձից ելնելով՝ կարող եմ նշել, որ վաղ տարիքում ընթերցվող գրքերը, դրանց գունազարդումները փոքրիկի համար պիտի լինեն զարմանալի, հրաշալի, հեքիաթային, ոչ հասարակ: Հաճախելով դպրոց՝ երեխան ընթերցում է այն գրքերը, որոնք ուսուցչուհին է հանձնարարում: Հստակ է, որ երեխաների ընտրությունը բազմազան է: Տոկոսային հարաբերությամբ 1-ին տեղում է ուսուցչի կողմից հանձնարարված գրքերի ընթերցման տարբերակը: Ուսուցիչը լավ գիտի, որ մանկական գիրքը իր դաշնակիցն է երեխայի դաստիարակն ու խորհրդատուն, և նա ճիշտ մանկավարժական մեթոդներով կազմակերպում է նաև արտադասարանային ընթերցանություն, որը երեխաներին նախապատրաստում է մանկական գրքերն ինքնուրույն ընտրելու: Արտադասարանային ընթերցանության ժամերին ուսուցիչը երեխաների ուշադրությունը հրավիրում է ընթերցանության անկյան վրա, որը ձևավորվում է առաջին իսկ պարապմունքից և գործում չորս տարիների ընթացքում:

Կրտսեր դպրոցականներն արդեն սկսում են օգտվել դպրոցի գրադարանից: Գրադարանավարները սերտորեն համագործակցում են ուսուցիչների հետ և կարդացած գրքերի շուրջ կազմակերպում զրույցներ և այլ միջոցառումներ: Այստեղ տեղին է նշել մանկագիր Ս.Մուրադյանի խոսքերը.<<<<Մանկական իսկական, կատարյալ ստեղծագործությունն այն պատուհանն է, որից ճառագայթած լույսը ջերմացնում է մանուկ ընթերցողին, ձևավորում նրա հոգին>>: Այդ լույսն է օգնում մանուկ ու պատանի ընթերցողին՝ տեսնելու, ընկալելու աշխարհի երևույթները, առարկաները՝ ընթերցողի առջև բացում կյանքում շիտակ ու ազնիվ քայլելու կանաչ ճանապարհ>>:[11] Կարևոր է գիրքն ընտրելիս հաշվի առնել դրանցում ներառված ստեղծագործությունների գրական-գեղարվեստական առանձնահատկությունները: Իսկական ստեղծագործությունը նման է բացվող բողբոջի, որը մանկան հոգում

[11] Մուրադյան Ս.,Սերունդների հետ միշտ նորանալով,1983թ.էջ 3:

դառնում է ծաղիկ, իսկ հետո՝ պտուղ: Հարցաթերթիկի 3-րդ կետով փորձել ենք պարզել, թե հեքիաթի որ տեսակն են նախընտրում ընթերցել կրտսեր դպրոցականները:

| Հրաշապատում | Կենդանական | Իրապատում |
|---|---|---|
| 45% | 39% | 16% |




Տրամագիր 3

Ինչպես ցուցադրված է տրամագրում՝ գերիշխող տեղում են հրաշապատում հեքիաթները: Եվ դա բնական է, քանի որ այս տարիքի երեխաները սիրում են ընթերցել այնպիսի հեքիաթներ, որոնցում մարդիկ, երևույթները չափազանցված են: Այս հեքիաթներում նրանք տեսնում են գերմարդկանց խիզախության բազմաթիվ օրինակներ, չարին հաղթելու համար մարդն օգնության է կանչում իրենից դուրս գտնվող բնության ուժերին:Չէ՞ որ այդ գերմարդկային ուժերը հրաշագործ են, գրավում են երեխաներին. երեխան ուշադիր հետևում է դեպքերին, փորձում է երևակայել իրեն՝ որպես հեքիաթում գործող կերպար, նա ճանաչում է բնությունը, փորձում բնության հրաշագործ ուժը կարգել իրեն օգնական: Հրաշք է նաև այն, որ ամբողջ բնությունն օժտված է կերպարանափոխության զորությամբ, սակայն, ինչպես նշեցինք, մայրենիի դասագրքերում հանձնարարվում են միայն կենդանական և իրապատում հեքիաթներ: Այս տեսակների համար առավել կարևոր են իրական իրագործելի դեպքերն ու դրանց լուծումները: Կենդանական հեքիաթներում, որոնք նույնպես շատ են գրավում երեխաներին, գլխավոր հերոսները կենդանիներն են, որոնք անձնավորված են: Այս երևույթը հեշտ ընկալելի է երեխաների համար: Օրինակ՝ աղվեսը շատ հեքիաթներում գլխավոր հերոսն է կամ գլխավորներից մեկը: Նա անձնավորված է հեքիաթներում որպես ճարպիկ մարդ: Հարցաթերթիկի հաջորդ՝ 4-րդ կետով փորձել ենք պարզել, թե որ հերոսն է ամենից շատ իրենց դուր գալիս հեքիաթներում՝ նշելով տվյալ հեքիաթի վերնագիրը և հերոսի անունը: Երեխաները բազմատեսակ պատասխաններ են տվել (<<Քաջ Նազար>>, <<Սպիտակաձյունիկ>>, <<Ձրահարս>>, <<Անահիտ>>): Նրանք նաև լավ հիշում էին հեղինակի անունը, հեքիաթի վերնագիրը: Ինձ շատ հետաքրքրեց նաև այն, որ աշակերտներից մեկը նշել էր Քաջ Նազար հերոսի անունը: Մեր հարցին, թե նա ինչու է նշել Քաջ Նազարին, ասաց, որ Նազարի բախտը միշտ բերում է կյանքում, և

ինքն էլ է ուզում, որ իր բախտը միշտ բերի: Մենք բացահայտեցինք, որ հարցաթերթիկի այս կետին տված աշակերտների պատասխանները, փաստորեն, մեզ հնարավորություն են ընձեռում նաև ճանաչելու յուրաքանչյուր աշակերտի ներաշխարհը, արժեհամակագը և հետևողական աշխատանքի շնորհիվ ուղղորդելու նրա զարգացումն ու ձևավորումը: Ընդհանուր առմամբ աշակերտները սիրում են դրական հերոսներին և փորձում նմանվել նրանց: Մանկական գրականությունը հինականում գեղարվեստական կերպարի ոճով է ներգործում երեխայի զգացմունքների ու բանականության վրա և հնարավորություն ընձեռում նրա մեջ դաստիարակելու բարություն, կոլեկտիվիզմի զգացում, հարգանք ու սեր մարդկանց նկատմամբ: Երեխաներն առավել զգայուն են գործող հերոսների բացասական արարքների հանդեպ, հեշտ ու արագ ընկալում ու մտապահում դրանք, նրանք կարողանում են տարբերել լավը վատից, ազնիվը՝ անազնիվից, փորձում են ընդօրինակել դրական հերոսներին: 5-րդ կետը վերաբերում է նրան, թե ընթերցելու համար գիրք ընտրելիս ինչն են կարևորում աշակերտները:

Երեխաների պատասխանները տարբեր են: Որոշ երեխաներ կարևորել են ծավալը, նրանք նշել են, որ սիրում են, երբ գիրքը փոքրածավալ է և իրենք արագ են իմանում, թե ինչ ավարտ ունի հեքիաթը, սակայն շատերը նախընտրում են կարդալ հաստափոր գրքեր, քանի որ իրենց դուր է գալիս ընթերցելու գործընթացը: Երեխաներից երկուսը նշել են, որ իրենց համար կարևոր է գրքի շապիկը, և իրենք սիրում են կարդալ վառ գունազարդվածները: Մի քանիսը կարևորել են տառատեսակը և տառաչափը և իմ հարցին, թե ինչու՝ ասացին, որ կարողանան հեշտությամբ ընթերցել, և աչքերը չցավեն: 51%-ի համար կարևոր էր նկարազարդումը, նրանք սիրում են կարդալ այն գրքերը, որոնցում շատ են գեղեցիկ գունավորումներով պատկերազարդ նկարները, և բարի հերոսները պատկերված են վառ , տաք գույներով, իսկ բացասական հերոսները՝ մուգ, սառը գույներով: Մայրենի լեզվի դասագրքերում լայն տեղ են գրավում ինչպես ներդիր նկարները, այնպես էլ գրական ստեղծագործությունների բովանդակությանը համապատասխան նկարները, որոնք նաև ճանաչողական, իմացական և դաստիարակչական ակտիվ դեր են կատարում: Այդ նկարները, որպես առաջին ազդարարներ, նպաստում են երկրորդ ազդարարների՝ խոսքի ընկալմանն ու զարգացմանը, ինչպես նաև ապահովում միջառարկայական կապը մայրենի լեզվի և նկարչության միջև: Այս տարիքում աշակերտների ընկալմանը բնորոշ են ցայտուն արտահայտված հուզականությունը: Նրանց մեջ անմիջապես հուզական արձագանք են առաջացնում իրականը, ցայտունը, քան, օրինակ, սխեմատիկ պատկերները:

| Նկարազարդում | Ծավալ | Տառատեսակ | Այլ տարբերակներ |
|---|---|---|---|
| 52% | 26% | 16% | 6% |



Տրամագիր 4

6-րդ հարցում նշված են, թե որ մանկական գրողի ստեղծագործություններից են նախընտրում ընթերցել կրտսեր դպրոցականները:

| Հ.Թումանյան | Ղ.Աղայան | Հ.Ք.Անդերսեն | Գրիմ եղբայրներ |
|---|---|---|---|
| 45% | 33% | 13% | 9% |



Տրամագիր 5

Երեխաների մեծամասնությունը նախընտրել է ընթերցել հայ գրողներից Հովհաննես Թումանյանի և Ղազարոս Աղայանի հեքիաթները, իսկ մնացած երեխաները նախընտրել են օտարազգի մանկագիրներին: Տարրական դասարանների դասագրքերում զետեղված են նաև այլազգի մանկագիրների ստեղծագործություններից, և երեխաները հաճույքով են ընթերցում այդ ստեղծագործությունները, որոնք հնարավորություն են տալիս աշակերտներին ծանոթանալու նաև օտարազգի ժողովուրդների մշակույթին, ավանդույթներին: Սակայն հայ մանուկներն ավելի շատ են ընթերցում հայ մանկագիրների ստեղծագործությունները, որոնք գերակշռող են նաև դասագրքերում՝ հանձինս Հովհաննես Թումանյանի և Ղազարոս Աղայանի: Ամենայն հայոց բանաստեղծը կարողանում է երեխայի համար այնպիսի հոգեվիճակ ստեղծել, որ նա առանց կամային լարվածության հասնի իմաստին, ըմբռնմանը: Առհասարակ, Թումանյանի

ստեղծագործությունները երեխաներն ըմբռնում են ինքնաբերաբար՝ առանց դժվարությունների, այսինքն՝ բանաստեղծը կարևորել է մատչելիության սկզբունքը:

Հայտնի է, որ հեքիաթներն ուղեկցում են երեխային մանկության ողջ շրջանում:

Հեքիաթների լեզուն հասկանալի է երեխային և նպաստում է՝

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- պատկերավոր, տրամաբանական մտածողության, երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը,
- մտային հնարների (վերլուծություն, համադրում, համեմատում, հակադրում, ընդհանրացում) ձևավորմանը,
- բնավորության և աշխարհայացքի ձևավորմանը,
- աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման կարողությունների ձևավորանը,
- բարձր բարոյական հատկանիշների, հայրենասիրության, ընկերասիրության, աշխատասիրության, ազնվության, պատասխանատվության, մարդասիրության, հանդուրժողականության, սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը,
- գեղագիտական ճաշակի ձևավորմանը,
- ավանդույթների շարունակականությանը,
- հայեցի մտածողության և ավանդույթների պահպանմանը:

Կարևորելով մարդկային արժեքները, որոնց մեծ մասը սերմանվում է հենց հեքիաթների միջոցով,հետազոտության ընթացքում փորձեցինք կազմակերպել դասարաններում հեքիաթի ուսուցման բաց դասեր Երևանի թիվ 33 հիմնական դպրոցի 2-րդ Ա և 3-րդ Բ դասարաններում՝ թեմաներն ընտրելով ինքնուրույն ընթերցանության համար երաշխավորված դասագրքերից:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով թեմային առնչվող գիտամեթոդական գրականությունը, պարզելով, թե ինչպիսի գործընթաց է ընթերցանությունը, որոնք են այդ գործընթացի բնութագրիչները և խնդիրները, կարևորեցինք այն, որ այս գործընթացը կրտսեր դպրոցականների համար գիտելիքների ձեռքբերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է:
2. Պրակտիկայի ընթացքում կատարված հետազոտությունները թույլ տվեցին պարզելու, որ կրտսեր դպրոցականների հետաքրքրության շրջանակներում առաջնային են հեքիաթները, հատկապես՝ հրաշապատում հեքիաթները, որն էլ հնարավորություն տվեց ավելի խորությամբ ուսումնասիրելու հրաշապատում հեքիաթների դերն ու նշանակությունը ընթերցանության կազմակերպման գործընթացում՝ հեքիաթների դասավանդման մեթոդական շղթայի քայլաշարին համապատասխան իրականացրած դասերի միջոցով:
3. Տարրական դասարաններում ուսուցման ճիշտ կազմակերպման և ընթերցանության նկատմամբ կայուն հետաքրքրության արթնացման գործընթացում կարևոր է արտադասարանային աշխատանքների ճիշտ կազմակերպումը, որը դասարանում կատարված ուսումնական աշխատանքի օրգանական շարունակությունն ու լրացումն է: Նման աշխատանքներում, ըստ իս, կարևորվում են երեխաների տարիքային և ընկալման անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ ուսուցչի կողմից համապատասխան մեթոդների ընտրությունն և կիրառումը:
4. Իմ կողմից վարած դասերի միջոցով եկա այն եզրակացությանը, որ հրաշապատում հեքիաթները մեծ հետաքրքրություն են առաջացնում երեխաների մոտ, հարստացնում են նրանց բառապաշարը, նպաստում են երևակայական կողմի բացահայտմանը և զարգացմանը, բնավորության, աշխարհայացքի ձևավորմանը, բարձր, բարոյական հատկանիշների՝ հայրենասիրության, ընկերասիրության, աշխատասիրության, ազնվության,գեղագիտական ճաշակի և այլ արժեքների ձևավորմանը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Գալստյան Ա., Խառազյան Ռ., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 2-րդ դասարան,Ե., 2010:
2. Գալստյան Ա., Խառազյան Ռ., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 3-րդ դասարան,Ե., 2010:
3. Գալստյան Ա., Խառազյան Ռ., Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան,Ե., 2015:
4. Գյուլամիրյան Ջ. Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., Զանգակ - 97, 2009, էջ128:
5. Գյուլամիրյան Ջ. Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., Զանգակ, 2015, էջ132:
6. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3, Ե., 2014:
7. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Ե., 2012:
8. Հայ ժողովրդական հեքիաթներ,հատոր 1,3:
9. Ղարիբյան Ա.,Ամիրյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա,Ե., 1955:
10. Մուրադյան Ս., Սերունդների հետ միշտ նորանալով, Ե.,1983,էջ 3:
11. <<Ոսկեդիվան>> (հեքիաթագիտական հանդես),Ե.,2012-13 ,<<Սահմանային գոտու սիմվոլիկան հրաշապատում հեքիաթներում>>,էջ46:
12. Սարգսյան Վ., Գրիգորյան Ս., Մայրենի 2,Ե.,2010:
13. Սարգսյան Վ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4,Ե.,2015:
14. Սարգսյան Վ.,Թորոսյան Կ., Մայրենի 3,Ե.,2018:
15. Սահակյան Ս.,Գիտամեթոդական հանդես,Նախաշավիղ, 4. 2017,էջ 53-56:
16. Սիմոնյան Ա, Գիտամեթոդական հանդես, Նախաշավիղ, 11. 2011,էջ 18-24:
17. Տեր-Գրիգորյան Ա.Ե., Ընթերցանության մեթոդիկա, Ե., Լույս, 1978, էջ 136:
18. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Արտադասարանային ընթերցանության կազմակերպումը ընտանիքում (Հայաստանի աշխատավորուհի), 1968, N6:
19. Տեր-Գրիգորյան Լ., Քյուրքչյան Ա., Մայրենի 2 , Ե.,2010:
20. Проблема формирования читательских интересов у младших школьников.
21. Курочкина М. Методы развития творческих способностей младших школьников // Воспитание школьников. - 2009. - № 4. - С. 48-51.